2022

ԵԻԲ-Ի ԱԿՆԱՐԿ

European Investment Bank Group

ԵՆԲ-ի ակնարկ

© Եվրոպական ներդրումային բանկ, 2022 թ.

98 -100, Կոնրադ Ադենաուեր ճեմուղի
L-2950 Լյուքսեմբուրգ
+352 4379-1
info@eib.org
www.eib.org
twitter.com/eib
facebook.com/europeaninvestmentbank
youtube.com/eibtheeubank

Բոլոր իրավունքները պաշտպանված են
Իրավունքների և լիցենզավորման վերաբերյալ բոլոր հարցերը պետք է ուղղել publications@eib.org էլ.հասցեին

ԵՆԲ-ի գործունեության մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ուսումնասիրել մեր կայքէջը՝ www.eib.org
Նաև կարող եք կապվել info@eib.org. էլ.փոստի միջոցով: Ստացե՛ք մեր նորությունների էլեկտրոնային բրոշյուրը հետևյալ հասցեով՝
www.eib.org/sign-up

Մեր ներդրումներն աջակցում են կայունությանն ամենուր՝ ներառյալ կենսաբազմազանության ոլորտում: 1 միլիոն տեսակներ վերացման վտանգի տակ են և փոշոտում իրականացնող տեսակները խստորեն նվազում են: Դա բարոյական մարտահրավեր է մարդկության համար, սակայն դա նաև տնտեսական խնդիր է: Բերքի փոշոտումը նպաստում է տարեկան 150 միլիարդ եվրոյին համարժեք գումարի ստեղծմանը. էկոհամակարգերը տարեկան ավելի քան 140 տրիլիոն եվրո են տալիս համաշխարհային տնտեսությանը: Փոշոտում իրականացնող տեսակները փոքր են, սակայն նրանց ներդրումը մեր կյանքում ահռելի մեծ է: Ահա թե ինչու այս տարի մենք ներառում ենք նրանց մեր գլխավոր հաշվետվությունների շապիկներին:

© Լուսանկարները տրամադրել է՝ ԵՆԲ (EIB), GettyImages, Shutterstock, BioNTech, Eggtronic, Anaconda Biomed, ENEL:

Հրատարակված է Եվրոպական ներդրումային բանկի կողմից:
Տպագրված է FSC® թղթի վրա:

print: QH-01-22-369-HY-C ISBN 978-92-861-5300-6 doi: 10.2867/859450
pdf: QH-01-22-369-HY-N ISBN 978-92-861-5267-2 doi: 10.2867/978178

ԵՆԲ-Ի ԱԿՆԱՐԿ

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) Եվրոպական միության վարկային կազմակերպությունն է. մենք Եվրոպական միության բանկն ենք: Մենք աշխարհի ամենամեծ բազմակողմ ֆինանսական հաստատությունն ենք և կլիմայի փոփոխության դեմ պայքարի համար ֆինանսավորում տրամադրող ամենամեծ կազմակերպություններից մեկը:

1958 թվականին հիմնադրվելուց ի վեր՝ ԵՆԲ-ն ներդրել է ավելի քան մեկ տրիլիոն եվրո Եվրոպայում և ամբողջ աշխարհի երկրներում իրականացվող ծրագրերի մեջ: Մինչդեռ կլիմայի փոփոխության դեմ պայքարը մեր գործունեության միայն մեկ մասն է, մեր գործունեությունը կենտրոնանում է հետևյալ գերակա ոլորտների վրա՝ կլիմա և շրջակա միջավայր, զարգացում, նորարարություն և հմտություններ, փոքր և միջին բիզնես, ենթակառուցվածքներ և համախմբում:

Եվրոպական ներդրումային հիմնադրամը, որը ԵՆԲ խմբի մասն է կազմում, մասնագիտանում է փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունների աջակցության ոլորտում՝ ֆինանսավորելով ձեռներեցությունը, աճը, նորարարությունը, հետազոտությունը և զարգացումը, զբաղվածությունը և տարածաշրջանային զարգացումը:

ԵՆԲ-ն աշխատում է ԵՄ այլ կառույցների հետ՝ խթանելու եվրոպական ինտեգրումը, զարգացումը Եվրոպական միությունում և աջակցելու ԵՄ քաղաքականությանը: Այս աշխատանքը տարածվում է Եվրոպայից դուրս. ԵՆԲ-ն ակտիվ է ավելի քան 160 երկրներում և ամեն տարի բարելավում է միլիոնավոր մարդկանց կյանքեր Եվրամիությունում և ամբողջ աշխարհում:

Համախմբումը մեր պատմության ընթացքում եղել է ԵՆԲ-ի աշխատանքի հիմքում: Ամբողջ Եվրոպայում ԵՆԲ-ի ներդրումներն ավելի են մերձեցնում ԵՄ երկրներին: ԵՆԲ Գլոբալի միջոցով, որը ստեղծվել է 2022 թվականին՝ մեծացնելու մեր զարգացման ֆինանսավորման ազդեցությունը, մենք օգնում ենք հաղթահարել գլոբալ մարտահրավերները և ստեղծել աճ և հնարավորություններ բոլոր մայրցամաքներում:

Այնպիսի ժամանակներում, երբ բազմակողմանիության արժեքը կասկածի տակ է դրվում, ԵՆԲ-ի աշխատանքը մշտապես հիշեցնում է ինտեգրված եվրոպական ջանքերի ուժի մասին:

COVID-19-ի տարածմամբ աշխարհը բախվեց առողջության հետ կապված անհապաղ արտակարգ իրավիճակների: Կար հրատապ անհրաժեշտություն՝ գտնելու պատվաստանյութ և լուծումներ՝ սահմանափակելու վիրուսի տարածումը: ԵՆԲ-ն ֆինանսավորել է COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մշակումն ու արտադրությունը և էական աջակցություն է ցուցաբերել առողջապահական այլ միջոցառումներին՝ ինչպես Եվրոպական միության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Սա ներառում է COVAX նախաձեռնության ֆինանսավորումը, որի նպատակն է երաշխավորել COVID-19-ի դեմ պատվաստումների արդար և հավասար հասանելիությունն աշխարհի բոլոր երկրներում:

Փոքր ընկերությունները հատկապես ծանր հարված են ստացել համավարակից՝ ժամանակավոր սահմանափակումների հետևանքով, և որովհետև, ի թիվս այլ պատճառների, նրանք հակված են ունենալ ավելի ցածր կանխիկ պահուստներ: ԵՆԲ խումբը զգալիորեն նպաստել է ԵՄ միջոցառումներին, որոնք ուղղված են ճգնաժամի տնտեսական հետևանքները եվրոպական բիզնեսի և տնտեսության վրա զսպելուն: ԵՆԲ-ի կողմից ստեղծված Եվրոպական երաշխիքային հիմնադրամը նպատակ ունի մոբիլիզացնել մինչև 200 միլիարդ եվրո՝ օգնելու փոքր և միջին ընկերություններին ճգնաժամից դուրս գալու համար:

Որպես աշխարհի ամենամեծ բազմակողմ վարկատուն՝ ԵՆԲ-ն օգնում է տնտեսություններին ծաղկել, ստեղծել աշխատատեղեր և նպաստել հավասարությանն ու կայունությանը: Մենք աշխատում ենք պետական և մասնավոր գործընկերների հետ և չափում ենք մեր հաջողությունը նրանով, թե որքանով է մեր աշխատանքն օգնում հասարակությանը և ավելի լավ է դարձնում կյանքն այն մարդկանց համար, ում վրա այն ազդեցություն ունի:

ԵՆԲ-ն ամենականաչ բազմակողմ վարկատուն է. որպես ԵՄ կլիմայի բանկ՝ ԵՆԲ-ն օգնում է կատարել Փարիզի համաձայնագրի՝ կլիմայի փոփոխության միջազգային պայմանագրի և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների պարտավորություններն ամբողջ աշխարհում իր գործողությունների միջոցով: Հաջորդ տասնամյակում կլիմայի և շրջակա միջավայրի կայունության համար ներդրումների համար խոստացվել է մեկ տրիլիոն եվրո:

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2021Թ.

360 միլիարդ եվրո

ԵՆԲ-ի գործունեությամբ աջակցվող ներդրումներ

4,8 տրիլիոն եվրո

ընդհանուր մոբիլիզացված ներդրումներ

95,86 միլիարդ եվրո

ԵՆԲ խմբի ֆինանսավորման մեջ

65,4 միլիարդ եվրո

ստորագրվել են նոր վարկեր

55,26 միլիարդ եվրո

ստացվել են պարտատոմսերի շուկաներից

Ավելի քան 45 միլիարդ եվրո

փոքր բիզնեսի ֆինանսավորում

15,38 միլիարդ եվրո

կայուն էներգիա և բնական պաշարներ

20,70 միլիարդ եվրո

խթանելու նորարությունը, թվային և մարդկային կապիտալը

4,5 միլիոն եվրո

փոքր բիզնեսում պահպանվող աշխատատեղեր

2012-2021թթ. ԵՆԲ-ի ընդհանուր ֆինանսավորումը Եվրամիությունից դուրս կազմել է 71,92 միլիարդ եվրո, որից 26,15 միլիարդը՝ Աֆրիկայում

10 միլիոն եվրո

մարդկանց համար ավելի ապահով խմելու ջուր

8,1 միլիոն եվրո

տներ, որոնք կունենան էլեկտրականություն

94,3 միլիոն եվրո

մարդիկ շահումն են բարելավված ենթակառուցվածքից

6,8 միլիոն եվրո

ակտիվացվել է 5G ծառայություններից օգտվող նոր բաժանորդների թիվը

346 միլիոն եվրո

հանրային տրանսպորտով լրացուցիչ ճամփորդություններ

826 000

մարդիկ ենթարկվում են ջրհեղեղի ավելի փոքր ռիսկի

11 400 ՄՎտ

էլեկտրականության գեներացման հնարավորություն 99,7%՝ վերականգնվող էներգակիրներից

33,26 միլիարդ եվրո

COVID-19 համավարակի ազդեցությունը կրած բիզնեսներին որպես օգնություն՝ ստորագրված վարկերի տեսքով

783 միլիոն եվրո

մարդիկ շահում են բարելավված առողջապահական ծառայություններից, ներառյալ COVID-19 –ի դեմ պատվաստանյութերից

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

ԵՆԲ-ն սատարում է Ուկրաինայի իշխանություններին և ժողովրդին: Այն աջակցում է անկախ Ուկրաինային:

Որպես այս ճգնաժամին ԵՄ-ի և միջազգային համակարգված արձագանքի մաս՝ մենք Ուկրաինայի համար ֆինանսական աջակցություն ենք հավաքել ԵՆԲ-ի համերաշխության փաթեթի միջոցով ՝ օգնելու Ուկրաինայի կառավարությանը բավարարել իրացվելիության իր հրատապ կարիքը: Բացի այդ, Եվրոպական հանձնաժողովի հետ համագործակցությամբ՝ ԵՆԲ-ն աշխատում է հետագա ֆինանսավորում տրամադրելու վրա, որպեսզի Ուկրաինայի կառավարությանը հնարավորություն ընձեռվի շարունակել կարևոր հանրային ծառայություններ մատուցել երկրում մնացած քաղաքացիների համար՝ ապահովելով սննդի, բժշկական պարագաների և վառելիքի հասանելիությունը, մինչդեռ նաև աջակցելով տրանսպորտի, էներգիայի, քաղաքաշինության և թվային նախագծերին:

ԵՆԲ-ն նաև հայտարարել է 4 միլիարդ եվրոյի ծրագիր 2022 և 2023 թվականների համար՝ օգնելու ԵՄ անդամ երկրների քաղաքներին և տարածաշրջաններին լուծել հրատապ ներդրումային կարիքները և դիմակայել Ուկրաինայից պատերազմի փախստականներին ընդունելու և ինտեգրելու մարտահրավերներին: ԵՆԲ-ի նոր ծրագիրը նպատակ ունի ֆինանսավորել հիմնական սոցիալական ենթակառուցվածքի զարգացումը՝ փախստականներին հանրային ծառայությունների տրամադրման նպատակով, ներառյալ բնակարանները, դպրոցները, հիվանդանոցները և մանկապարտեզները:

ԵՆԲ-ն շարունակում է աշխատել եվրոպական գործընկերների հետ՝ ուսումնասիրելու Ուկրաինային և ուկրաինական փախստականներին օգնելու լրացուցիչ հնարավորությունները:

ԵՆԲ-ն աջակցել է գերմանական BioNTech ընկերությանը 100 միլիոն եվրոյով՝ մշակելու COVID-19-ի դեմ առաջին պատվաստանյութը:

COVID-19

ԵՆԲ-ն եղել է Եվրամիության գլոբալ արձագանքման առաջին գծում COVID-19 համավարակի դեմ պայքարում և միախմբվել է միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և ՄԱԿ-ի Միջազգային մանկական շտապ օգնության հիմնադրամը՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

ԵՆԲ խմբի հրատապ աջակցությունը հնարավորություն է տվել փոքր և միջին ձեռնարկություններին և նորարար ստարտափերին ներդրումներ կատարել՝ չնայած ծայրահեղ անորոշության: Մենք ակնկալում ենք մոբիլիզացնել շուրջ 200 միլիարդ եվրոյի ֆինանսավորում մեր Եվրոական երաշխիքային հիմնադրամի հետ՝ աջակցելով կենսունակ ընկերություններին, որոնք համավարակի պատճառով պայքարում էին գոյատևման համար:

ԵՆԲ-ն նաև օգնել է ֆինանսավորել COVID-19-ի պատվաստանյութերի մշակումը և գնումը, վիրուսի տարածումը սահմանափակելու լուծումները և հանրային առողջապահական այլ նախագծեր՝ կապված COVID-19-ի ճգնաժամի հետ:

Համավարակի ժամանակ ԵՆԲ-ն ֆինանսավորեց Eggtronic ստարտափը, որը հայտնագործեց հոսանքի էներգախնայող փոխարկիչ: Իրենց բարձր էներգաարդյունավետության պատճառով Eggtronic փոխարկիչներն ունեն շատ ավելի փոքր էկոլոգիական հետևանք, քան նմանատիպ սարքերը:

ԿԼԻՄԱ ԵՎ ԷՆԵՐԳԻԱ

Կլիմայի փոփոխությունը մեր սերնդի ամենամեծ գլոբալ մարտահրավերն է: Կլիմային առնչվող նպատակներին հասնելը կորոշի մեր երեխաների բարեկեցությունն ու կյանքի տևողությունը: ԵՆԲ-ի կլիմայական և էներգետիկ նպատակները նոր չափանիշներ են սահմանում Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Մենք այլևս չենք աջակցում հանածո վառելիքի նախագծերին և մինչև 2025 թվականը մեր ներդրումների 50%-ը կհատկացնենք կլիմայի փոփոխությունների դեմ պայքարին և կայունությանը:

ԵՆԲ-ի գործունեությունն արագացնում է կանաչ աճը և տնտեսությունների ապակարբոնացումը: Մենք կենտրոնանում ենք էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի վրա, որոնք օգնում են և՛ նվազեցնել CO_2 արտանետումները, և՛ ամրապնդել մեր էներգետիկ անվտանգությունը: Մեր բոլոր գործողությունները նպաստում են կայուն սոցիալական և տնտեսական աճին:

ԵՆԲ-ի ներդրումները նաև վերաբերում են կլիմայի փոփոխության ազդեցությանը խոցելի համայնքների վրա՝ պաշտպանելով կենսաբազմազանությունը և խթանելով կայուն գյուղատնտեսությունը: Մենք պահպանում ենք բնական ռեսուրսները և ապահովում ենք անվտանգ շրջակա միջավայրն ապագա սերունդների համար: Յուրաքանչյուր նախագիծ, որին ԵՆԲ-ն աջակցում է, լինի դա նորարարության, փոքր բիզնեսի կամ ենթակառուցվածքների համար, պետք է համապատասխանի մեր կլիմայական նպատակներին:

ԵՆԲ-ն աջակցեց Anaconda-ին՝ նորարար իսպանական ընկերությանը, որը մշակել էր ծախսարդյունավետ բուժում, որն օգնում է բժիշկներին փրկել կյանքեր և նվազեցնել հաշմանդամությունը ինսուլտից հետո:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նորարարությունը պահպանում է Եվրոպայի մրցունակությունը և ստեղծում է բարձրարժեք աշխատատեղեր: ԵՆԲ-ն աջակցում է նորարարության շատ փուլերին՝ սատարելով կենսամակարդակը բարելավող գաղափարները:

Մենք աջակցում ենք լայնամասշտաբ հետազոտություններին և նախագծմանը, ինչպես նաև փոքր, մասնագիտացված ընկերություններին: Մեր ներդրումներն այնպիսի հատվածներում, ինչպիսիք՝ են հեռահաղորդակցությունը, ավիացիան, բժշկությունը և թվայնացումը, հաստատման կնիք են, որը գրավում է մասնավոր հատվածի լրացուցիչ ֆինանսավորում այդ ծրագրերի համար: ԵՆԲ խումբը ժամանակակից տեխնոլոգիաների ստեղծումը և զարգացումը հնարավոր է դարձնում եվրոպական ընկերությունների համար:

ԵՆԲ-ի վարկերի օգնությամբ համալսարանները ստեղծում և ընդլայնում են իրենց հետազոտական կառույցները, իսկ ստարտափներն ավելացնում են իրենց անձնակազմը և բարելավում իրենց սարքավորումները: ԵՆԲ-ի աջակցությամբ նորարար գաղափարները վերածվում են բիզնես հաջողությունների:

ԵՆԲ-ն առաջատար վարկատուն է փոքր բիզնեսների համար Արևտյան Բալկաններում՝ օգնելով գրեթե 30000 ընկերությունների, որոնք պահպանում են կես միլիոն աշխատատեղ: Մեր աշխատանքի արդյունքում Սերբիայի ավելի քան 1800 դպրոց ունի ավելի արագ համացանց և ավելի լավ թվային սարքավորումներ, որպեսզի համավարակի ընթացքում ուսուցիչներն աշակերտներին առաջարկեին հեռահար ուսուցում տանը:

ՆԵՐԱԴՈՒՄ

ԵՆԲ-ն հզորացնում է փոքր բիզնեսներին ու երիտասարդներին և սատարում է կին ձեռներեցների՝ նրանց տրամադրելով վարկերի և ղեկավար պաշտոնների հասանելիություն: Մենք փոքր եկամուտ ունեցող բնակչության, ինքնազբաղված անձանց և միկրոձեռնարկությունների համար հնարավոր ենք դարձնում ֆինանսավորում և բիզնես խորհրդատվություն ստանալը՝ ապահովելու նրանց ծրագրերի հաջողությունը:

Մենք չենք վարկավորում ծրագրի արժեքի կեսից ավելին: ԵՆԲ-ի ներդրումը մշակված է՝ գործելու որպես արագացնող խթան, որպեսզի մասնավոր հատվածը լինի ավելի ներգրավված՝ մեծացնելով ներդրումները որևէ ծրագրում:

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲ-ն գումար է վաստակում՝ թողարկելով պարտատոմսեր միջազգային կապիտալի շուկաներում: Մեր գերազանց կրեդիտային վարկանիշը թույլ է տալիս մեզ ֆինանսներ ստանալ լավ տոկոսներով, և այս առավելությունները փոխանցվում են հաճախորդներին:

ԵՆԲ-ի՝ կապիտալ շուկաների հարցերով փորձագետները ստեղծել և զարգացրել են կանաչ և կայուն պարտատոմսերի շուկաներ: Մենք կանաչ պարտատոմսերի ամենամեծ վերազգային թողարկողն ենք, որը սատարում է վերականգնվող էներգիան, էներգաարդյունավետությունը, մաքուր ջուրը և սանիտարական պայմանների ապահովումը:

SIZE 10

Համավարակի ժամանակ Կոնգոյում փոքր բիզնեսները ԵՆԲ-ից վարկեր ստացան արդար տոկոսադրույքով, այլ ոչ թե ոչ պաշտոնական վարկատուների շատ բարձր տոկոսադրույքներով՝ օգնելով այդ բիզնեսներին և նրանց համայնքներին:

ԵՆԲ ԳԼՈԲԱԼ

ԵՆԲ Գլոբալը՝ ԵՆԲ-ի զարգացման մասնաճյուղը, գործարկվել էր 2022 թվականին՝ զարգացմանն ուղղված մեր ֆինանսավորման ազդեցությունը մեծացնելու նպատակով: ԵՆԲ-ն ներդրել է ավելի քան 70 միլիարդ եվրո Եվրամիության տարածքից դուրս վերջին տասնամյակում (2012-2021թթ.)՝ ամեն տարի մոբիլիզացնելով միլիարդավոր ներդրումներ մասնավոր հատվածում: ԵՆԲ Գլոբալը մեծացնում է ԵՆԲ-ի ազդեցությունը տեղական մակարդակով՝ ավելի մոտենալով տեղական համայնքներին, ընկերություններին և հաստատություններին ամբողջ աշխարհում:

ԵՆԲ-ն կընդլայնի իր աջակցությունը տեղական միկրոֆինանսավորման ընկերություններին այն տարածաշրջաններում, որտեղ մարդիկ հաճախ չունեն բանկերի որևէ հասանելիություն: Երբ մարդիկ կարող են վարկ ստանալ, բիզնեսները վարձում են ավելի շատ աշխատողներ, կանայք անկախ են դառնում, սխալ տեղակայումը նվազեցվում է և ընտանիքները կարող են ուղիներ փնտրել աղքատությունից դուրս գալու համար:

Մենք կմեծացնենք ԵՆԲ-ի ոլորտային փորձառությունը տեղական մակարդակով՝ տեղական գործընկերների հետ կիսվելով մեր գիտելիքներով և փորձով: Մենք անկախ խորհրդատվություն ենք տրամադրում՝ ելնելով այն փորձից, որը ձեռք է բերվել շատ երկրներում և ոլորտներում աշխատելու արդյունքում: Այս խորհրդատվական ծառայությունները կարող են ուղեկցել ԵՆԲ-ի ֆինանսական ապրանքատեսակները, սակայն կարող են նաև առաջարկվել անկախ ֆինանսավորումից:

Կլիմայի փոփոխությունը, COVID-19 համավարակը և այլ ճգնաժամերը պահանջում են, որ մեր գործընկեր միջազգային և ազգային բանկերի հետ ներդրված միլիարդները վերածվեն տրիլիոնների՝ ստեղծելով նոր գործակցություններ և աշխատելով համաշխարհային այլ ֆինանսական հաստատությունների հետ: Ամենակարևորը, որ ԵՆԲ-ի ներգրավվածությունը խրախուսում է մասնավոր հատվածի ներգրավվածությունը, ինչը բացում է ներդրումների նոր մակարդակներ:

Միայն զարգացող երկրներին անհրաժեշտ է ավելի քան 2 տրիլիոն եվրոյի տարեկան լրացուցիչ ներդրումներ՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին և կլիմայի փոփոխությանն ուղղված Փարիզի համաձայնագրի հավակնություններին հասնելու համար:

Որպես ԵՄ-ի կլիմայական բանկ՝ ԵՆԲ-ն աշխատում է աջակցելու Եվրոպական Կանաչ գործարքին, Եվրոպական միության ծրագրին, որպեսզի համոզվի, որ մինչև 2030 թվականն իր կլիմայի, էներգիայի, տրանսպորտի և հարկային քաղաքականությունները կնվազեցնեն ջերմոցային գազերի արտանետումներն առնվազն 55%-ով: Այնուամենայնիվ, Եվրոպական միության մասով այն կազմում է գլոբալ արտանետումների միայն 10%-ը, ուստի ԵՆԲ Գլոբալը կօգնի ընդլայնել ԵՄ-ի ապակարբոնացման ջանքերն իր սահմաններից դուրս՝ աջակցելով Գլոբալ կանաչ գործարքին:

ԵՆԲ Գլոբալը Եվրոպական հանձնաժողովի առանցքային դաշնակիցն է 300 միլիարդ եվրո արժողությամբ «Գլոբալ դարպաս» ծրագրում՝ աջակցելու նախագծերին, որոնք բարելավում են գլոբալ և տարածաշրջանային կապը թվային, կլիմայի, տրանսպորտի, առողջապահության, էներգիայի և կրթության ոլորտներում: Զարգացման վարկավորումը և ֆինանսական գործակցություններն արագացնում են աճը, գյուղական շրջանները դարձնում են ավելի բարգավաճ, քաղաքները՝ ավելի նորարար և ամրապնդում են տնտեսությունները:

ՀԱՆՁՆԱԴՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲ-ն թափանցիկ է և հաշվետու ԵՄ քաղաքացիներին իր ամբողջ գործունեության համար: Մեր բնապահպանական և սոցիալական չափանիշները մեզ հիանալի գործընկեր են դարձնում մեզ հետ աշխատող պետական և մասնավոր հատվածի կազմակերպությունների համար: Մեր անձնակազմը բարձր որակավորում ունեցող, նվիրված և բազմազան է: Այն ներառում է տնտեսագետներ, ինժեներներ, ֆինանսական վերլուծաբաններ և կլիմայի հարցերով զբաղվող մասնագետներ, ովքեր ամեն օր աշխատում են տեղական փորձագետների, հաստատությունների և կառավարությունների հետ ամբողջ աշխարհում:

ԵՆԲ խումբը բաղկացած է Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) և Եվրոպական ներդրումային հիմնադրամից (ԵՆՀ):

ԵՆԲ-ն Եվրամիության բանկն է: Այն աշխարհի ամենամեծ բազմակողմ վարկառուն և վարկատուն է: Հիմնված լինելով Լյուքսեմբուրգում՝ ԵՆԲ-ն ունի տեղական և տարածաշրջանային գրասենյակների մեծ ցանց Եվրոպայում և նրա սահմաններից դուրս:

ԵՆՀ-ն աջակցում է փոքր բիզնեսներին՝ բարելավելով նրանց ֆինանսավորման հասանելիությունը Եվրոպայում և Եվրոպայից դուրս գտնվող մի շարք երկրներում: ԵՆՀ-ն նախագծում և զարգացնում է վենչուրային և աճող կապիտալը, երաշխիքներ և միկրոֆինանսավորման գործիքներ՝ խթանելու նորարարությունը և զբաղվածությունը:

ԵՆԲ Գլոբալը ԵՆԲ-ի զարգացման միջազգային մասնաճյուղն է: Հիմնադրվելով 2022 թվականին՝ ԵՆԲ Գլոբալը շարունակում է ԵՆԲ-ի տասնամյակներ տևած հանձնառությունը՝ ֆինանսավորելու զարգացումը, կլիմայական գործողությունները, նորարարական ներդրումները, կայունությունը և մարդկանց օգնելու նոր ուղիներն ամբողջ աշխարհում:

06/2022 HY

print: ISBN 978-92-861-5300-6
pdf: ISBN 978-92-861-5267-2